

Աճատուրեան վրդպի երբեմն Պատրիարք մեծի Պօլսոյ:»

8. 22 Մայիս 1778 «ի յանբօնայ» նոյն առ նոյն «... գրեալ էիր զլուեալ լուրն ձեր ի կոստանդնուպօլսոյ եւ իրակութեանցն որ անդ... եւ արարմանց վիճասիրաց... տէր լուսաւորեսցէ զմիտ եւ զսիրտ ամենայն հակառակորդաց. տէրունական վճիռէ Ամենայն որ հարցի ի վէմն եւ այլն: Գեր. Յարութիւն Աստուածաբան վարդապետին ընծայեմ զողջոյն Տեառնաւանդ... զմերոցս կացութենէն կարես սոյն գրաբեր բանաւոր քարտիղէս այսինքն ձեր եւ մեր հարազատ սիրելի պարօն Յովսեփէն ի մանալ ... Գրիգոր վրդպի երբեմն եւ այլն:»

9. 25 Հոկտ. 1778 «ի յանբօնայ» նոյն առ նոյն «... մորմոքմամբ մեծաւ իրազեկ եղէ անցից անցելոց, Տէր օգնական լիցի եւ ի թիկունս հասցէ նոցա ... մեք պարտիմք աղօթել զի մնացելոց տացէ լուսաւորութիւն մտաց ի ճանաչել զճշմարտութիւնն... եւ վասն այսոցիկ իրաց չորեքկին անձինքն որք գիմեալք են առ դուրս կայսեր, նոցին որով իւիք վերադառնալոյն ձայնի եւ լրոյ ակնադէտ եմ... զի գրէ թէ ի մէջ մեծի մտատանջութեան կամ. զի ոչ ունիմ քուն աչաց եւ նինչ արտեւանաց իմոց, որոյ սոյն հրդեհմանց վերջն մտածեմ եւ զենն անգիտանամ... Գրիգոր վրդպի երբեմն եւ այլն:»

10. 22 Մոյ. 1778 «ի անբօնայ», նոյն առ նոյն «... մինչ ընթերցայ, սոսկացայ եւ դողա-